## 76. ՆԸՂԱՐԱՉՈՒՆ ՔՅԱԼԱԳՅԸ

*Մին նըղաըաշի քշերեն կեսին Հըրսընքան տո̄ւս ա կյամ, վըեր քյինա̈ տոն։ Հղեննի քյինա̈լիս վաըար թոռ ա կյամ նըղարաշին նի յա մննում մին Օրա̈նա̈ ճեղաց, քարեն յիրա նստում, մխըրե կենում, տըեսնում տոռնը պեց իլա̈վ, մին ղըեռ աըչ նի մտավ։ Նըղարաշին գյո̈ւղո̄ւմ չի, թա հինչ անե։ էլլա ուրա̈ն կուրցընում չի, նըղարան յոր ա օնում, ըսկսում պեցո̈ւր սա̈սա̈վ վըեր թակելը։ Աըշը վըխելան մին էս պատին ա տամ, մին էն պատին, տոռնն էլ քմըկան նհըետ ա ինո̄ւմ, տո̈ւս կյա̈լի տըեղ չի ինո̄ւմ, օղում ա թա պատեընըյեր եր ինի, տափըեն ա վըեր ինդյո̄ւմ։*

*Էտ նըեղ ղա̈րո̄ւմը մին հարուստ խոջա ճորեն վըեսկավ՝ պեռնած տըեղավ անց կընալիս ա ինո̄ւմ։ Նրղըրեն սա̈սը վըեր ըսկանում ա, գյո̄ւղո̄ւմ ա, թա հըրսանեքյ ա, կյամ ա։ Ծըղացին տոռնը պենում ա, թա նի մննե, աըշը տո̄ւս ա կյամ, փախճում։ Նըղարաշին վըեր խուջեն փախած ըռանգյը տըեսնում ա, ետ ա տըեռնում տըրան ասում.—Տու քանի կըլխանե յը՞ս, վըեը տոռնը պեց ըս անում, թաքավըերեն աըշը պեց թողում, ես մեհենդյ թաքավըեըեն հինչ ջո՞ղոր պիտի տամ, նա աըշը ինձ ա տուվալ, վըեը էս խոր ծորումը սուվըրցընըեմ, տու կյամ րս պեց թողում։*

*Խոջան, ճարը կտրած, պիրում ա ճորուն պեռնած վըեսկեն տամ նըղարաշուն, ղաչանք-պըղատանք անում, թա թաքավըերեն ասըեսվուչ։*